

ԲԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Ո՛Վ ԷՐ ՄԼՔԷ ԹԱԳՈՒՂԻՆ

Ս. Ղազարու մատենագարանը կը պահէ թանկագին Աւետարան մը, գրուած 902 թուականին, և սեպականութիւն Արծրունեաց Մլքէ դշխոյին, որոյ նկարներն ու յիշատակարանը նմանահանու թեմամբ հրատարակուեցան Մխիթարեանց տպարանէն: Անոնց մէջ այդ տիկինն ինքզինքը կ'անուանէ «Հայոց թագուհի», զգացնելով թէ կին է «արքային Գագայ»։ Ո՛վ ծնունդ տուած էր Վասպուրականի այդ տիկնոջ, որոյ ծագումը կ'արժէ արդարեւ գիտնալ, իբրեւ հայ պատմութեան և իւր սեփական ականաւոր դէմքերէն մին:

1. — Նկարներուն հրատարակիչը Հ. Մ. Պոտուրեան՝ հետագայ տեղեկութիւնը կու տայ թագուհւոյ մասին. «Մլքէն Հայոց Սմբատ Ա թագաւորին (890-914) եղբոր Շապուհի աղիկին էր: Շապուհի իր այս զուտորը՝ Վասպուրականին Գագիկ իշխանին կնութեան տուած էր... կ'ապացուցուի պատմական փաստերով», որոնք կրկին են: Առաջին՝ Արծրունեաց պատմիչին հետեւալ վկայութիւնը. «Անդանօր եկեալ Շապուհ եղբայր թագաւորին (Սմբատայ), և կացուցանէ զԳագիկի՝ իշխան վասպուրական տէրութեանն, նա մանաւանդ զփեսայացուցեալ էր Շապուհ զԳագիկի զուտոր իւր» (թով. Արծր. 265): Երկրորդ՝ «այս Գագիկը՝ որ արքայ կը կոչուի (Մլքէ), ուրիշ ոչ ոք է՝ բայց Վասպուրականի թագաւորը», կ'ըսէ հրատարակիչը:

Ըստ յիշատակարանաց, զորս ուրիշ աղբիւր ճշդած ու յառաջ բերած եմ թագավորի մէջ (1911, էջ 128), Մլքէն ստացող է աւետարանիս, և շինող վարագայ Ս. Աստուածածնի, որ Վասպուրականի մէջ էր. հետեւաբար իւր ամուսինը Գագիկ նոյն նահանգի առաջին Ար-

ծրունի թագաւորը միայն կրնար լինել: Բայց ինք թագուհին Շապուհ թագուհուհու զուտորն էր, ինչպէս կարծեցին հրատարակիչը, և Հ. Բ. Սարգիսեան (Բզմվ. 1909, էջ 435), իմ պատասխանս ժխտական է, և այս կէտը ցոյց պիտի տամ հետագայ տողերուս մէջ, հաստատուելով նոյն ինքն թովմայի պատմութեան վրայ, որ այս խնդրոյն լուծման լաւագոյն աղբիւրն է. երեք զրիչներու արդիւնք, որով և կարօտ ուշադիր ընթերցման՝ չշփոթելու համար անձինքն ու դէպքերը: Ասոր օժանդակ կայ Շապուհ կարծեցեալ պատմութիւնն ալ, թէպէտ լի ժամանակագրական խառնակութեամբ:

2. — Հարկ է վարկեան մը դառնալ Գագիկ մանկութեան օրերուն: Իւր հայրը Դերենիկ, իշխան Վասպուրականի, իրեն ծածուկ հակառակորդ ունէր իւր տոհմակիցը՝ Գագիկ Ապուրուան, որ իւր անհրժեշտ Բագրատունեաց Աշոտ արքայի թոռը և իւր զաւակաց մօրաքեռորդի էր (302): Եւ այդպէս երկանուն էր, որով պատմիչը կը կոչէ մերթ երկուցով (155, 242, 252, 257 են), մերթ Գագիկ (246, 253, 254, 261, 262), և Երեմե լոկ Ապուրուան (261, 263, 264 են), իշխանասէր ու խորամանկ մէկն էր այդ Արծրունին. և Դերենիկ արդէն կասկածոտ և ատեցող անոր (Շպ. 69), ի վերջոյ ձերբակալեց ու բանտեց զայն Վանտուր բերդին մէջ (թով. 253-4, 295), ուր և մեաց մինչև իշխանին մահը (302):

Դերենիկին ինքն ալ ատելի եղած էր Բագրատունեաց տան, անաստեղծ իւր անեղծ խրատներուն (Թոհ. կթղ. 173), և անհաւատարիմ գտնուելով իւր ամուսնոյն (Շպ. 64): Ապուրուան փոստեր էր շահագործել այդ պարագաները և Բագրատունեաց աչքը մտեր: Երբ մեռաւ Դերենիկ, թողուց իւր երեք մանր զաւակները: Աշոտ իննամեայ, Գագիկ եօթնամեայ և Գուրգէն հինգամեայ: Առտո արքայ փութապէս իւր Շապուհ որդին դասերը Սոփիայի և թոռներուն ցով: Եկաւ, անդրանկին տուաւ հօրն իշխանութիւնը:

և արքային հրամանաւ ազատելով բան-
տէն միւս քեռորդին Ապոււմրուանը, ման-
կանց անչափահասութեան համար զայն
վասպուրականի «ոստիկան» կարգեց՝
մինչև որ բուն ժառանգեցեր հասնէին
(Թով. 257, 302)։ Դերենկան մահէն
տարի մը վերջ Աշոտ թագաւորն ալ վախ-
ճանեցաւ, և զահլը թողուց Սմբատ որդւոյն,
որ իւր քրոջ ու քեռորդուց հանդէպ ցուրտ
կը վարուէր, «զի սիրէր զԱպոււմրւան»
(Եպհ. 71)։ Պատանի իշխանորդին որոշ
հասակ մ'երբ առին, հայրենի երկիրը
բաժնեցին իրենց մէջ (Թով. 261)։ Բայց
իրենց խնամակալը չհրաժարեցաւ իւր տի-
րապետական նպատակներէն, և հետ զհե-
տէ սկսաւ գրաւել վասպուրականի բեր-
դերը, և վերին իշխանութիւն մ'ի գործ
դնել Դերենկան ժառանգաց վրայ, պատ-
ճառելով միշտ անոնց տնաստութիւնը (Թով.
261. Եպհ. 71)։ Եւ վախճանին լաւա-
գոյն հասնելու համար՝ իւր Սեղա զուտորն
անոնց անդրանկին կնութեան տուաւ (Թով.
271, 303. Եպհ. 64, 69)։

Իւր փեսան Աշոտ խակութիւն մ'ալ
ըրաւ, հակառակ Սմբատ արքայի հրա-
մանին՝ ելաւ զնաց Պարսից կողմերուն
տիրող Օշին զօրավարի նենգամիտ հրա-
ւէրին, որ թշնամի էր իւր քեռւոյն։ Սաս-
տիկ զայրացաւ Սմբատ, և Անձեացեաց
Գուրգէն իշխանին և Ապոււմրուանայ հրա-
մայեց՝ բացարձակ կերպով տիրել ու ժա-
ռանգել ամբողջ վասպուրականը, զոր
անոնց գործարդեցին (Թով. 262)։ յետոյ
բռնեցին ու բերդարգել ըրին երեք իշխան-
որդիները (Թով. 261, 303. Եպհ. 71)։
Սմբատ ուզելով իւր գոհունակութեան ու
վաստահութեան լաւագոյն ապացոյց մը
տալ իւր այդ նախասիրած քեռորդւոյն՝
Ապոււմրուանայ, զրկեց Շապուհ եղբայրը՝
զայն վասպուրականի իշխանապետ կար-
գելու։ Ճիշդ այս կէտն է՝ զոր կը պատմէ
Արծրունեաց պատմիչը՝ Հ. Պոտուրեանի
վերև տուած վկայութեան մէջ, թէ Շա-
պուհ «կացուցանէ զԳագիկ (Ապոււմրուան)
իշխան վասպուրական տէրութեանն»։ և
հիշէ այս նենգաւորն է՝ զոր Շապուհ կան-

խաւ «փեսայացուցեալ էր ի դուստր իւր»։
Հետեաբար Մլըք և ամուսինը Գուրգէն,
երկրորդ որդի Դերենկան և յետոյ թա-
գաւոր, զործ չունին այդ վկայութեան
մէջ, և Մլըքն Շապուհ Բագրատունւոյ
դուստրը չէր։ Ապոււմրուանի չարահաւար
գործունէութեան դրուագը վերջ գտաւ ա-
նոր սրախողխող սպանմամբ բանտարկեալ
իշխանորդուց կուսակցաց կողմանէ, երբ
օր մը հեծելական պտոյտ մը կ'ընդ տա-
պարիզի մէջ (Թով. 267-68)։ Եւ այս-
պէս Դերենկան զաւակները տէր դարձան
իրենց հայրենի իշխանութեան։

3. — Այդ շրջանին Արծրունեաց բազ-
մաճիւղ ազգատոհմին մէջ բարոյապէս կը
փայլէր ուրիշ դէմը մ'ալ, Գրիգոր Ապու-
համզա՝ որդի վասակայ, որուն հիացող
մ'է թովմա, և կը նկարագրէ զայն՝ «ոգե-
զուարճ իմաստութեամբ աուցեալ, հոյա-
կապ և անուանի ի մէջ հայկականաց,
և ցանկալի խողացս և ուրախարար տե-
սողաց, սա առաւելեաց յամենայն հոգա-
ծութիւնս ի զիւտս իմաստութեան ուսում-
նասիրութեան և այլն ամենայնի՝ քան
զհարա և զհաւա իւր» (248)։ Կը բնակէր
իրեն սեպական Սրճուճք ամրոցին մէջ
իւր զաւակաց հետ (312), որոց իրեն
արժանի դաստիարակութիւն մ'ալ տուած
էր։ Բուն այս ազնուականին փեսայացած
էր Արծրունեաց զահուն ապագայ հիմնա-
դիրը Գագիկ, հրապուրուած անշուշտ ա-
նոր համբաւէն. «զի առեալ էր զղուստ
Ապուհամզայի իւր կնութեան», կը գրէ
յայտնապէս թովմա (313), ինչ որ վրի-
պեւ է վերոյիշեալ բանասիրաց ուշադրու-
թենէն։ Հետեաբար Մլըք այդ իշխանին
զաւակն էր և ազգաւ Արծրունի։

Ապուհամզա յեցած իւր աներութեան
վրայ, ուզեց օգուտ քաղել այդ վայրկե-
նէն, և իւր իմաստութեան հակառակ քալլ
մ'ըրաւ, զուրիս ամբառնալով և ուզելով
ինքնիշխան կառավարել իւր հայրենի ժա-
ռանգութիւնը։ Գագիկ, որ յաջորդեւ էր
վասպուրականի տէրութեան մէջ իւր վա-
ղամեծիկ Աշոտ եղբոր, զօրք զրկեց անե-
րոջը դէմ, ձերբակալեց զայն որդւոցը հետ

և առջևը բերել տուաւ: Անոր զաւակաց հարստաւագոչ աղերսը՝ զիրենց չզրկելու հայրենի ժառանգութենէն, և իւր ցիւսա-յութեան զուժը՝ ամբեցին անոր ցասու-մը: Գործնական մարդ, ի հիմանց քանդեց անոնց ամբողջը, որպէս զի չխորհին անգամ մ'ալ խլտիլ, և թողոց վայելել իրենց ժառանգութիւնը՝ վասպուրականի գրօշին ներքեւ (312-13): Հետ գնեալէ նուանեց կամ հարուածեց նաև ուրիշ ըմբոստ իշ-խաններ, ինչպէս Շապուհ և Մովկաց տեարըր (312, 314), և գրաւեց այլազ-գեաց ձեռք զոնուած բերդերը (315-17):

Իւր քեռին Սմբատ արքայ սկսաւ կաս-կածիլ անոր ընթացքին ու նպատակի մասին, և միջոցներ ձեռք առաւ՝ որպէս զի չգօրանար: Այս բանս աւելի զրգռեց գիտագին, որ Վրաց Աւրենբրսն թագաւո-րին ու Սմբատայ Աշոտ եղբորդուոյն հետ միացաւ, զնաց յարեցաւ քեռուոյն թշնամի Յուսուփ ոստիկանին, և անոր զինակից դարձաւ: Հայոց զահր զրաւելու նպատա-կով, Արարացին մեծ ուժերով խաղաց Սմբատայ դէմ, խորտակեց անոր բանակն ու ձերբակալեց զայն, անոր երկրաւոր թիզը փոխանակելով երկնաւորով: Ե զԳա-թիկ փառաւորեցու (31. կիթ. ԽԳ. Ասող. Գ. դ. թիվ. 317-21) « ի վերայ ամե-նայն Հայոց »՝ ըստ բաղձանաց Արծրունի պատմչին (321): Այսպէս վասպուրականի Մլքէ տիկինն ալ կը դառնար « Հայոց թագուհի » տիտղոսով միայն. որովհետև իրենց իշխանութեան սահմանները նոյն մնացին ինչ որ էին, և քաղաքատունեաց արծիւը շուտով վերաբացաւ թեւերը Շի-րակայ վրայ:

Հիմայ ճանչցանք՝ թէ ո՞վ էր Մլքէ. Արծրունի մը՝ լծակցած Արծրունւոյ մը: Մնած բարեպաշտութեամբ և ուսումնա-սիրութեամբ հայրենի տանը մէջ, նոյն-պէս ալ մնաց Գագկայ զահուն վրայ: Եւ իւր անունն ու յիշատակը յանձնեց Ս. Ղազարու՝ ծանօթ Աւետարանով, և վա-րակալի ուխտին՝ ձեռակերտովը. « տա-նարն ժամատուն » բարձր և կաթողիկէիւ, զբարբ և որմով անջրպետեալ ի ժամա-

տանէն յարեւից կուտէ... և է նուիրեալ յանուն սուրբ Աստուածածնի », կը գրէ Հ. Ն. Սարգիսեան (Տեղագր. 257):

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՔՆՆԱՎԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ ԵԶՆԻԿԻ ՄԱՍԻՆ

(Լ. Մարիէսի աշխատութեան առթիւ)

(Շար. տես Բագմ. 1925 էջ 294)

Աղանդների յանդիմանութիւնը լոկ տե-սական, այսպէս ասած, գիտական հար-ցասիրութեան նիւթ չէ եղնիկի համար: Նա ունի և գործնական նպատակներ: Քննելով և տապալելով խոշոր վարդա-պետական սիւսմեաները, նա աշխատում է վանել ժողովրդի մէջ արմատացած շըր-ջուն զաղափարներն ու հաւատալիքները, մշակուած դարերի ընթացքում հակաբրիս-տոնէական ուսմունքների տակաւին միջնո-լորտում, աշխատում է հնացած մեռած աշխարհայեացքների միայուն ստուերները վանել քրիստոնէական գիտութեան լուսով:

Այդպիսի գործնական նշանակութիւն ու-նի առաջին զորքի երկրորդ մասը ժիւ-իլ-այսինքն առաջին մեծ յօդուածը տալ բաժ-նի, որ անուանեցինք միջամուխ ժողո-վրդական կենդանի միջավայրից առած թանգագին նիւթեր են, որ բերում է եղնիկն ու լուսաբանում, պայքարելով հին տե-սութեանց հետ, հայ ժողովուրդի հաւա-տալիքների և պաշտամունքների աշխար-հին վերաբերեալ հնաւանդ տեղեկութիւն-ներ են, շողուն զոհարներ հայ ֆուկուրի, որ փայլում են եղնիկի էջերում:

Այդ մասին կը խօսինք առանձին յօդուա-ծում, ի նկատի ունենալով նիւթի կարեւորու-թիւնը, այլ և չուզենալով ծանրաբեռնել ներկայ գրութիւնս: Յիշենք միայն այս-քան, որ ժիւ-իլ-միջամուխ գլուխները, մեր կարծիքով, քաղաւածոյ բնաւորութիւն ունին և բացի արդէն յայտնի աղբիւրնե-րից, ինչպէս օր. Հիպպոլիտը, եղնիկն օգտուել է նաև մի հին յիշատակարանից,